



0084 Армения, Ереван, ул. 3. Андраника 1  
Тел. 060 38 00 01

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan  
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ  
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,  
Հեռ. 060 38 00 01

Էլ. ասուցի: [hven@hven.am](mailto:hven@hven.am), [www.hven.am](http://www.hven.am)

No. 17-1

«17» 02 2022թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

«ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 03-Ի N° 01-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի «թ» ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հաշվի առնելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վերահսկման և գույքի կառավարման բաժնի պետ Արտուշ Մելքոնյանի «Mulberry» էլեկտրոնային համակարգի 2022 թվականի փետրվարի 16-ի N° Ն/26/721-2022 գրությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ընկերության գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 03-ի «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության տարեկան գույքագրման մասին» N° 01-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1 Հրամանի 1-ին կետի 1.2.6 ենթակետում «Սամվել Աթոյան - Ընկերության շահագործման ծառայության առաջատար ճարտարագետ (ԲՓ խմբի ղեկավար)» բառերը փոխարինել «Նարեկ Ստեփանյան - Ընկերության շահագործման ծառայության «Հարավային» տեղամասի պետի տեղակալ» բառերով:

1.2 Հրամանի 2-րդ կետի 2.3 ենթակետում «2022 թվականի փետրվարի 18-ը» բառերը փոխարինել «2022 թվականի մարտի 4-ը» բառերով:

1.3 Հրամանի 4-րդ կետում «2022 թվականի մարտի 4-ը» բառերը փոխարինել «2022 թվականի մարտի 18-ը» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ